ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

№ 04/29.7/2/7679-2025

«18» «սեպտեմբերի» 2025թ.

«ՀԵՏՔ»-Ի ԼՐԱԳՐՈՂ Տ.ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

ԷԼ.ՀԱՍՑԵ՝ tirayrmuradyan@gmail.com

[redacted]

Հարգելի պարոն Մուրադյան

Ի պատասխան Ձեր՝ 2025 թվականի սեպտեմբերի 15-ի հարցման՝ տեղեկացնում եմ, որ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) աշխատակիցների կողմից Արարատի մարզի Մասիս համայնքի Ռանչպար բնակավայրի վարչական տարածքում իրականացվել են չափագրման աշխատանքներ, որոնց արդյունքներով արձանագրվել են.

2023 թվականի փետրվարի 1-ի, օգոստոսի 24-ի, 2024 թվականի մարտի 20-ի, հուլիսի 16-ի, հոկտեմբերի 24-ի չափագրման արդյունքներով «ԱՐԱՐԱԿ» ՍՊԸ-ի կողմից արդյունահանվել է ընդհանուր՝ 91755խմ ծավալի ավազակոպճանման խառնուրդի լեռնային զանգված, վերջինիս գործունեության ընթացքում դեգրադացվել է 130070քմ մակերեսով տարածք:

2025 թվականի ապրիլի 14-ի, հուլիսի 7-ի, սեպտեմբերի 2-ի չափագրման արդյունքներով «ՀԵԼԼԱ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊԸ-ի կողմից արդյունահանվել է 23433խմ ծավալի ավազակոպճանման խառնուրդի լեռնային զանգված, վերջինիս գործունեության ընթացքում դեգրադացվել է 19209քմ մակերեսով տարածք:

Չափագրման բոլոր արդյունքները սահմանված կարգի համաձայն ուղղարկվել են ՀՀ քննչական կոմիտե:

Տեղեկացնեմ նաև, որ 2025 թվականի օգոստոսի 20-ին Տեսչական մարմնի աշխատակիցներն արձանագրել են, որ «ՀԵԼԼԱ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊԸ-ն ավազի լվացման

0009, ՀՀ ք. Երևան, Կորյուն փող. 15
levon.levonyan@ecoinspect.gov.am | info@ecoinspect.gov.am
www.ecoinspect.am
+374 15 770 470

նպատակով ջրառ է իրականացրել տարածքում առկա մակերևութային ջրային ռեսուրսից՝ առանց ջրօգտագործման թույլտվության:

Տեսչական մարմնի Արարատի տարածքային բաժնի պետի 2025 թվականի օգոստոսի 21-ի որոշմամբ ապօրինի ջրօգտագործումը կասեցվել է:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

_x_____

ԼԵՎՈՆ ԼԵՎՈՆՅԱՆ

Կազմող՝ Նաիրա Աղաբաբյան
Իրազեկման և հանրության հետ կապվող աշխատանքների բաժին
հեռ. 015 48 88 87